10

# ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ

## Հանձնվում է նախնական կալանքի տակ գտնվող անձին՝ անմիջապես դատարանի առաջ ներկայանալու պայմանով

### կամ դատարանի առաջ ներկայանալ ըստ հանցագործության կատարման հաշվետվության՝ դատական ստուգման վերանայումից հետո

Դուք հետապնդվում եք (քրեական) ուղղիչ դատարանի առաջ և արդեն դրվել եք նախնական կալանքի տակ մինչեւ դատավարության օրը, որի ժամանակ դուք դատվելու եք ըստ այն փաստերի, որոնցում մեղադրվում եք: Այս փաստաթուղթը հիշեցնում է այն հիմնական իրավունքները, որոնցից դուք կարող եք օգտվել:

***<u>Դուք կարող եք պահպանել այս փաստաթուղթը ժամանակավոր կալանքի տակ գտնվելու ամբողջ ընթացքում</u>***

**Օրենքի խախտման իմացությունը**

Դուք իրավունք ունեք իմանալ հանցագործության կատարման անունը, ամսաթիվը և տեղը, որի համար ենթարկվել եք հետաքննության և ձեր ազատազրկման պատճառները:

**Իրավաբանի օգնության մասին**

Դուք կարող եք խնդրել, որ ձեզ աջակցի ձեր ընտրած կամ ավտոմատ կերպով նշանակված իրավաբանը:
Դուք կարող եք ազատ շփվել բանավորու գրավոր կերպով ձեր իրավաբանի հետ, և վերջինս դատավարության օրը ձեզ կօգնի, այդ օրվա մասին նրան պետք է տեղեկացնեք:

**Լռություն պահելու իրավունքը**

Դատարանի առաջ, դուք կարող եք կամ հայտարարություններ անել, կամ պատասխանել ձեզ տրվող հարցերին, կամ լռել:

**Թարգմանչի աջակցությունը**

Եթե դուք չեք խոսում կամ հասկանում ֆրանսերենը, դուք իրավունք ունեք օգտվել թարգմանչի անվճար օգնությունից՝ ձեր լսումների եւ ձեր փաստաբանի հետ շփվելու նպատակով.

**Ձերբազատման իրավունք խնդրելու մասին**

Ցանկացած ժամանակ, դուք կարող եք դատարանին խնդրել ձեզ

ազատ արձակել:

## Ազատազրկման տևողությունը

Ձեր նախնական կալանքը կտևի մինչև ուղղիչ դատարանի առաջ ձեր ներկայանալու ամսաթիվը կամ մինչեւ այդ դատարանի առաջ նորից ձեր ներկայանալու ամսաթիվը:

Եթե դուք ժամանակավոր կալանքի տակ դրվել եք ազատություններից և կալանքի դատավորի կողմից դատարանի առաջ ձեր անմիջապես ներկայանալու պահանջով, այդ կալանքը կարող է տևել երեք աշխատանքային օրից ավել:

Եթե դուք ժամանակավոր կալանքի տակ դրվել եք ազատություններից և կալանքի դատավորի կողմից, դատական ստուգումը ձեր կողմից չհարգելու պատճառով, որը պարտադրված էր ուղղիչ դատարանի առաջ ձեր անմիջապես ներկայանալու սպասումով, այդ դեպքում կալանքը կարող է տևել երկու ամսից ավել:

Եթե դուք ժամանակավոր կալանքի տակ դրվել եք ուղղիչ դատարանի կողմից, որը ձեր գործն ուղարկել է մի ավելի ուշ ամսաթվով դատալսման, այդ դեպքում կալանքը չի կարող տևել վեց շաբաթից ավել, կամ չորս ամսից ավել, եթե հանցանքը, որում մեղադրվում եք, պատժվում է յոթ տարի ազատազրկմամբ:

## Որոշ անձանց տեղեկացնելը

Դուք իրավունք ունեք տեղեկացնել այն մարդկանց որոնց ցանկանում եք, հատկապես ձեր ընտանիքի անդամներին, այն մասին, որ ժամանակավոր կալանքի տակ եք գտնվում:

Եթե դուք օտարերկրի քաղաքացի եք, դուք կարող եք բացի այդ տեղեկացնել մեկի միջոցով ձեր երկրի հյուպատոսական իշխանություններին:

## Բժշկական քննության մասին

Դուք կարող եք խնդրել զննվել բժշկի կողմից:

## Ծանոթանալ ձեր անձնական գործին

Ձեր փաստաբանը կարող է ծանոթանալ ձեր գործի փաստաթղթերին ու իրավունք ունի խնդրելու դրա պատճենը:
Դուք նույնպես իրավունք ունեք խնդրելու դրա պատճենը: